

85

89/ 99

12-33

15 APR 2009



3778

12 MAR 2011

801.99
12-33

ՌԷՆ

65579
20

ՆԱԽԿԻՆ ՈՒՍԱՆՈՂԸ

ՊԱՏԱՆԻԱԾՔ

Արտատպւած «ՊԱՏԱՆԻ» արմանախից



Ք Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՊՐՕԳՐԱՄ», Միհայելեան փողոց, № 102.
1912

24.07.2013

52067

ՆԱԽԿԻՆ ՌԵՍԵՐՈՂԵ



Զղջումը որքան ուշ, այնքան
ողբերգական է լինում:

Ես պատրաստվում էի մանկել համալսարան: Ինձ-
պէս չքաւոր ուսանողի համար՝ դժւար էր տաս րու-
բի մենակ սենեակի վարձ տալ, ուստի տեղափոխեցի
նորը ընկերոջս մօտ, որը նոյնպէս պատրաստվում էր
քննութիւն տալու:

Մեր հարեան սենեակում ապրում էր մօտ 37 տա-
րեկան մի մարդ, որն առաջին իսկ օրից իւր վրայ
դարձրեց իմ ուշադրութիւնը: Նրա երկար մազերը,
թուխ միրուքը, դանդաղաշարժ արտահայտչակերպը, կլոր
դէմքը, միմեանց լրացնելով, մարդու վրայ թողնում
էին ներդաշնակութեան և գեղեցկութեան խորը տպա-
ւորութիւն: Նրա լայն ճակատի կնճիռներն աւելի լըր-
ջութիւն էին տալիս դէմքին, և պարզ նկատւում էր
յոգնածութիւն, վիշտ և ծայրայեղ յուսահատութիւն:
Հազին ունէր ուսանողական կապոյտ բլուզ, և կապում
էր գոտի:

Նրա քայլածքը, շարժումները և խօսակցութեան
տոնը, դուրեկան էին և նուրբ: Մտաւորականի ուժեղ
տպաւորութիւն էր թողնում: Դէպի այդ անձանօթը
զգում էի մի տեսակ համակրանք և սէր: Եւ փափա-
գում էի ծանօթանալ նրա հետ: Եւ ծանօթացայ:

Մեր ծանօթութեան օրը ես գտն էի և ուրախ:

Ես յաճախ մտնում էի նրա մօտ, խօսում էինք
զանազան նիւթերի շուրջը, վիճում, հակաճառում և
նոյն իսկ շատ անգամ էլ իրար վիրաւորում: Մեր խօ-
սակցութեան նիւթը կեանքն ու գրականութիւնն էր:
Օ՛, ինչպէս կրակոտ էր խօսում նա. նրա հսկողա-
կան ոճի, լեզւի և տրամաբանութեան առաջ, շատ ան-
գամ խոնարհւում էի և խոստովանում իմ ամօթալի



պարտութիւնը: Նրա խօսքերն աւելի յուզիչ և թախ-
ծալի էին լինում այն ժամանակ, երբ նա պատմում
էր իւր ուսանողական կեանքից: Սակայն մի բան էի
նկատում, որ նա իւր անցեալին մօտենում էր զգու-
շութեամբ և մի առանձին խնամքով թաքցնում ին-
ձանից:

Մեր ծանօթութեան օրից ամիսներ էին անցել:
Ինձ յաջողել էր մտնել համալսարան: Իմ ամեն մի
բուպէն թանգ արժէր, դրա համար էլ ուշ-ուշ էինք
տեսնուում: Առաջին ամիսները լաւ էի պարապում. սա-
կայն ես էլ շուտով ենթարկեցի ուսանող-ուսանողու-
հիների շրջանին: Գիշերները շատ ուշ էի վերադառ-
նում տուն: Այժմ ինձ մի այլ կեանք էր հետաքրքը-
րում: Հարեանիս գրեթէ մոռացել էի:

Մի գիշեր սովորականին պէս ուշ վերադարձայ
տուն. ընկերս քնել էր. ձրագը վառեցի, նստեցի մի
քիչ պարապելու: Անսպասելի կերպով սեղանիս վրայ
գտայ մի երկտող՝ հետեւալ բովանդակութեամբ.

«Արեւիկի բարեկամ. գիշերւայ որ ժամին էլ վե-
րադառնաք տուն, խնդրում եմ անպատճառ այցելէք
ինձ: Ձեր Կունդուրիա Սկումբուրդիս»:

Կարդալով տոմսակը իսկոյն և եթ մտայ հարեա-
նիս մօտ: Սակայն նրան պառկած գտայ. նա դժգոյն,
շուսահատ և մեղամախճոտ էր:

Երբ ինձ տեսաւ շատ ուրախացաւ:

— Ինչքան մոռացկոտն էք եղել, — ասաց նա, ուղիղ
աչքերիս մէջ նայելով:

— Այո, ուսանող-ուսանողուհիների շրջանը ամեն
ինչ մոռացնել տւեց ինձ, — պատասխանեցի ես:

— Այդ ուսանողները, ուսանողները, դարձեալ
ուսանողները, — ասաց նա, և մի պահ լռելուց յետոյ
շարունակեց, — ես այժմ էլ առողջ եմ, բայց մի դէպք,
մի ողբալի դէպք, ոճրագործի անկողին գցեց: Դէհ
լսեցէք, բարեկամս, մինչև այժմ ես ձեզ անձանթ եմ
մնացել, սակայն այս գիշեր ես կը բանամ ձեզ իմ
տխուր անցեալի պատմութիւնը: Լսեցէ՛ք, գուցէ այս

գիշերը իմ կեանքի վերջին գիշերը լինի:

«Իմ կեանքը եղել է մի տխուր ողբերգութիւն, —
ասաց նա և արտասուքը խեղդեց նրան:

Վերջին նախադասութիւնը նա հայերէն արտասա-
նեց. առաջին անգամն էր ինձ հետ հայերէն խօսում: Ես
շարած նայում էի նրան: Ինձ թւում էր, որ նա հայերէն
չը խօսեց, որ ես սխալ հասկացայ: Այդպէս կարծելու
իրաւունք ունէի, որովհետեւ մենք բոլորս էլ մինչ այդ
համոզւած էինք, որ նա յայն է: Գիտէինք և այն, որ
նրան կանչում էին Կունդուրիա Սկումբուրդիս, և որ
այդ հայկական անունն չէ: Սակայն, որքան աւելի
մեծ եղաւ զարմանքս, երբ նա հայերէն պատմեց ինձ
հետեւեալը.

«Ինչպէս ասացի, իմ կեանքը եղել է մի տխուր
ողբերգութիւն: Այն ժամանակ ես Պետերբուրգում ու-
սանող էի. վերջացնելով առաջին տարւայ քննութիւն-
ները, արձակուրդին եկայ Մոսկւա: Ուսանող ընկերու-
րիս հետ սովորութիւն էինք դարձրել ամեն երեկոյ
դնալ Տվերսկոյ քաղաքային պարտէզը զբօսնելու. որ-
տեղ միշտ նւագում էր երաժշտական խումբը: Մենք
հոժ բաղմութեան մէջ, մեր չարածձի կատակներով,
ծամածութիւններով, այս ու այն օրիորդներին, գե-
ղեցիկ արկիներին զբաղեցնում, ուրախացնում և
ծանօթանում էինք... Մեղանից իւրաքանչիւրը վերցնե-
լով մէկին կամ միւսին անյայտանում էինք... Հետեւալ
օրը իրար պատմում էինք մեր արարքները և ծիծաղում
թեթևօրիկ կանանց վրայ: Մի ժամադրութեան տեղը
Պուշկինի արձանն էր: Մի երեկոյ Պուշկինի արձանի մօտ
սպասում էի ընկերներիս: Բայց յանկարծ դիմացիս նըս-
տարանի վրայ նկատեցի հարաւի մի սիրուն օրիորդ:
Աննկատելի կերպով մօտեցայ: Նա մօտիկից աւելի գե-
ղեցիկ էր և գրաւիչ: Խօսում էր ռուս օրիորդի հետ,
քննադատելով կանանց գլխարկները և շրջագոստնե-
րը: Նրա ոճը, առողանութիւնը հայկական էր, խօսում
էր ռուսերէն ոչ այնքան հարազատ: Կանանց սրտերը

կարդալու համար մենք շատ վարպետ էինք: Ուստի
ևս փորձեցի իմ առաջին հայեացքը: Նա կարմրեց:

«Ուրոգրութիւնն յաջող էր, կարթը ձուկին բռնել
էր: Ես որոշեցի ծանօթանալ նրա հետ, և ծանօթա-
ցայ...»

«Նա աւարտել էր գիմնազիոն ոսկէ մեդալով և
իւր հարուստ բարեկամների հաշուով եկել էր Մոսկւա
բժշկութիւն սովորելու: Մայրաքաղաքում չունենալով
ծանօթ կամ բարեկամ, մտել էր մի ուսւս ընտանիքում
գիշերօթիկ:

«Սօնա էր նրա անունը: Նա չափազանց միամիտ
և բարձր էր: Ուստի նրան գրաւելու համար հար-
կաւոր էր նրա պէս լինել: Ես ինձ ձեռնդրեմ էի բա-
րեմիտ, ազնիւ, մաքուր, համեստ, և շատ անգամ
աշխարհի ձեռակաշիւթիւնների էի դիմում, որ նա նոյն
իսկ պատրաստ էր անձնատուր լինել ինձ, վստահ
լինելով, որ ես նրան երբէք չեմ դժբախտացնիր...»

«Զիւմ յիշում իմաստասէրներից իւրը, ասում է.
«Փախիր կնոջից, նա գալիս է. հետևիր նրան՝ նա ան-
յայտանում է ինչպէս մի սուրբ»: Ես առաջինի պէս
վարեցի Սօնայի հետ, մինչև այն աստիճան, որ նրա
կեանքն ամայի անապատի էր նման առանց ինձ:

—Օ՛, սիրելի բարեկամս,— շարունակեց նա խորը
հառաչանքով,— մենք ուսանողներս սոված վարպետների
պէս շրջում էինք ամեն տեղ, աւելի նորերը, թարմեր և
գեղեցիկներ որսալու: Ա՛խ, քանի՜-քանի՜ այդպիսի անմեղ-
ների եմ դժբախտացրել և քանի՜-քանի՜ աններից արտա-
սուրներ եմ խել: Ամեն մի տուն կամ ընտանիք մըտ-
նելիս, սողացել եմ որպէս աղէկ և անյայտացել
եմ որպէս սառնայ, թողնելով յուսախաբների
տանեակ զոհեր: Այդպէս է մայրաքաղաքի ուսանողի
կեանքը:

Կունդուրիսը պահ մի լռեց, թախծալի ժպտը
սահեց նրա դէմքից, ու մի բացասական արտայայ-
տութիւն մտաւ նրա հայեացքի մէջ. կարծես կամե-

նում էր ասել՝ ո՛չ, այդպէս չը պէտք է լինէր: Նա սըթ-
քեց ձախառի քրտինքը, հանեց մի ծխախոտ, վառեց և
շարունակեց մի նոր, տարրեր թափով:

«Ամառային պարզ գիշեր էր: Կաթնաման
լուսնի շողերը պատուհանի փեղկերից ներս էին խու-
ժել. ճրագը մարել էինք, որպէսզի աւելի բոնա-
ստեղծական լինի: Իսկ մենք փարած իրար կրծքի,
նստած պատուհանի մօտ, խօսում էինք սիրոյ և մեր
ապագայ երջանկութեան մասին: Ինչքան գեղեցիկ էր
այդ գիշերը: Առաջին անգամն էր, որ մեր սրտերը
պարզ և բաց կերպով խօսում էին ընտանեկան
կեանքի մասին:

—Կաւարտես համալսարանը,— ասում էր նա,— ես
էլ կը վերջացնեմ բժշկական կուրսերը, մենք այնուհե-
տե կ'ապրենք և մեզ, և ժողովրդի համար:

—Անմիտ — մտածում էի ես, — ներկան թողած, ապա-
զայի մասին է երազում: Ծիշտ է, որ իմաստասէր-
ներից մէկն ասում է. «Կինը մեծ երեխայ է»: Ի՞նչ
ասել է ապագայ երջանկութիւն, — հարցնում էի
ինքս ինձ, — և կամ թէ՛ ընտանեկան կեանք, ապրել և
մեզ և ժողովրդի համար, սրանք առաձգական բա-
ռեր են, որոնք ամեն օր լսում ենք:

—Բայց, Սօնա, — վրայ բերի ես, — եթէ դու ինձ
սիրում ես, ինչպէս խոստովանեցիր... աղա... դու...

—Յիմար, — պատասխանեց նա ժպտալով և ոտքի
կանգնեց:

«Բաւական ուշ էր արդէն և ես նրան առաջնոր-
դեցի մինչև իւր բնակարանը: Չափազանց վերաւորած
բաժանեցի նրանից: Վերադառնալով սենեակս հան-
ւեցի քնելու: Սակայն բռնու չէր տանում:

—Ինչո՞ւ մերժեց, միթէ՞ նա ինձ չէ սիրում...

Այս և նման հարցեր ինձ անհանգստացնում էին:
Քայց գաղտնիքը շուտով պարզեց երբ մտաբերեցի, որ
եւս զործ ունեմ հայուհու հետ: Միւս օրը երեկոյան
որոշեցի ոչ մի տեղ չը գնալ: Ըրագը թողի վառ և պառ-
կեցի մահճակալիս վրայ. և սկսեցի ծխել ու մտածել:

Երեկոյեան ժամը 8-ին մօտ դուռս ծեծեցին:

—Մտէ՛ք, ասացի,— վերաւորեաժ տոնով:
Սօսան էր:

—Բարե քեզ, պարոն փիլիսոփայ,— ասաց նա և նստեց մահճակալիս մօտ: Ես ոչինչ չը պատասխանեցի. նոյն անտարբերութեամբ ծխում էի և լուռ մտածում: Նա հանեց կոնատակից մի հաստ գիրք, դրեց կրծքիս և կռացաւ ինձ վրայ: Ես զգացի նրա տաք շուրթերի հպումը երեսիս, և լսեցի նրա «հիւանդ ես» հարցը: Յետոյ Սօսան, ձեռքը դրեց ճակատիս իմ տաքութիւնը իմանալու: Ես առանց խօսելու վերցրի գիրքը և սկսեցի թերթել: Դա պատուէր տւած մի հաստ տետրակ էր, որի առաջին երեսի վրայ կայքած էր երկուսիս լուսանկարը: Մեր լուսանկարից մի քանի տող ներքև Սօսան խոշոր տառերով գրել էր.— «Մեր կեանքը»:

—Ի՞նչ ես ուզում ասել սրանով,— հարցրի ես:

—Այն եմ ուզում ասել, որ այս գիրքը պիտի լինի մեր յիշատակարանը, որի անունը պէտք է լինի «Մեր կեանքը». այժմ հասկանալի է, պարոն փիլիսոփայ,— պատասխանեց Սօսան և բռնելով թևիցս տաքաւ գրասեղանի մօտ ու գրիչը տալով ձեռքս՝ խնդրեց մի բան գրել: Ես էլ գրեցի Վ. Հիւզօի հետևեալ տողերը.— «Մէրը կարճատև խելագարութիւն է»:

—Իսկ փիլիսոփաները կարճատև խելագարներ,— վրայ բերեց Սօսան և ծիծաղելով պառկեց մահճակալիս վրայ:

—Գիտե՞ս Սօսան, դու դեռ նախապաշարեաժ ես: Ուստի լսիր մի քանի գծեր մեր ուսանող-ուսանողուհիների կեանքից: Բայց որպէսզի մտքերս կարողանամ ամփոփել հարկաւոր է լռութիւն և աղջամուղջ: Օ՛հ, Սօսան, ես սիրում եմ մթութեան մէջ լինել և խոկալ:

«Այս ասելով, ես մարեցի ճրագը, քաշեցի պատուհանի վարագոյրը և սկսեցի պատմել մեր կեանքից: Նա լուռ լսում էր: Գիշերւայ ժամը 12-ը խփեց: Ես էլ լռեցի: Քիչ յետոյ ես ինձ ազատ զգացի. գլու-

խըս դրի նրա կրծքի վրայ: Նրա սիրտը արագ-արագ բարախում էր յուզմունքից: Մօտ քաւորդ ժամ մենք չէինք խօսում, կրքերը երկուստեք վառում էր մեզ. դրանից յետոյ մի լուռ պայքար սկսեց մեր մէջ... Ես զգացի կանաչի մի թոյլ դիմադրութիւն... Եւ յանցաւոր սննեակը մեզ հետ ննջեց...

Ես նրա հետ այդպէս ապրեցի մօտ երեք ամիս,— ասաց Կունդուրիս ու մի պահ լռելուց յետոյ շարունակեց.— Սօսան օրէցօր կորցրեց իւր գեղեցկութիւնն ու գրաւչութիւնը. նա այլևս ինձ այնքան չէր հետաքրքրում: Նոյն իսկ շատ անգամ մի տեսակ հակակրանք էի զգում դէպի Սօսան: Սակայն նրա անկեղծ սէրը նրան հասցնում էր խելագարութեան աստիճանին:

«Արձակուրդները վերջացել էին, սեպտեմբերին նա ինձ ճանապարհ դրեց: Կայարանում գրկախառնուլեցինք. ճիրմակ թաշկինակը նրա աչքերից չէր հեռանում: Երբորդ զանգը տւին, գնացքը ինձ խլեց նրանից: Պատուհանից նկատում էի թէ ինչպէս նա բաժանուց ամբոխից, և մենակ, տարտամ կանգնեց կայարանի մի ծայրին ու սկսեց սպիտակ թաշկինակը շարժել:

«Ես զրեթէ ամեն օր նամակ էի ստանում նրանից: Բոլորի բովանդակութիւնը կազմում էր մեր ապագայ երջանկութիւնը: Երբեմն-երբեմն ստիպւած էի լինում պատասխանել նրա նամակներին, որպէսզի վտանգաւոր միջոցի չը դիմէր: Իմ ցանկութիւնն էր, որ Սօսան կամաց-կամաց կտրէր իւր յոյսը ինձնից, և կապէր մի ուրիշի հետ, ինչպէս արել էին իմ միւս բոլոր գոհերը:

«Որքան անմիտ եմ այն մարդիկ,— մտածում էի ես,— որ իրենց կեանքը կապում են մի կնոջ հետ մինչև իրենց մահը: Ամուսնական միակերպութիւնը սպանում է կեանքը, ուստի ապրիր, որի հետ կամենաս,— այսպէս էինք տրամաբանում մենք ուսանողներս: Սակայն այդպէս չէր մտածում Սօսան: Ինձանից զատ

նա ոչ ոքի չէր ճանաչում. նա իւր նամակներին մէկում գրում էր.

«Իմ սիրելի Սուրէն,

Վաղուց է որ բարեկամներն նամակ եմ գրել և խնդրել, որ աւելացնեն ապրուստիս փոքր, առարկելով թէ ամեն բան թանկացել է: Որոշել եմ խնայողութեամբ ապրել, որպէսզի գրա մի մասը փոխադրեմ քեզ: Ուստի մի որոշ և ձիշտ հասցէ ուղարկիր: Ինչու այդքան շուտ-շուտ ես տեղափոխում: Կուրսերին այլ եւ չեմ յաճախում, ինչպէս քեզ գրել էի բոլոր մանրամասնութիւնները: Օրէցօր ես ինձ աւելի ծանր եմ զգում, շուտով քեզ մի գաւակ կը ծնի: «Մեր կեանքը» յիշատակարանի մէջ նշանակեցի քո ճանապարհորդութեան օրն ու թւականը: Արձանագրել եմ նաեւ մեր նամակագրութիւնների կարեւոր կողմերը: Տանտիրուհուս հետ մի ընդհարում ունեցայ: Այժմ ես ապրում եմ Նեմեցկայա փող. տուն 6, բնակարան 23: Գրիր քո կեանքից: Համբուրում եմ քո կարմիր շուրթերը և սևորակ աչքերը:

Քո Սօնա»:

«Կարգալով նամակը, զգացի որ այս անգամ տուժելու եմ իմ բոլոր արարքների համար: Թողնել համալսարանը կիսատ, երբէք չէի փափագում, այն էլ փիլիսոփայութեան ճիւղը, որ պրօֆէսորները միշտ էլ խրախուսում էին ինձ իրեն մեծ ապագայ խոստացող: Իսկ կեանքս կապել նրա հետ, ինչ որ մի քանի ամսւայ ծանօթութեան համար, այդ արդէն ինձ կատաղեցնում էր: Բայց ինձ մտատանջութիւն էր պատճառում այն հանգամանքը, որ եթէ նրա բարեկամներն իմանային ամբողջ եղիլութեան մասին, ապա ինչ պէտք է լինէր հետևանքը: Մի քանի շաբաթից յետոյ էլի նամակ եմ ստանում: Գրում էր.

«Թանկագին Սուրէն,

Ամենից առաջ պէտք է աչքալոյս տամ, որ քեզ ծնաւ մի սիրուն աղջիկ: Դրացուհիները զարմանում են նրա առողջութեան և չաղութեան վրայ: Սա արտաքոյ կարգի ուրախութիւն էր, որ հաղորդեցի քեզ: Անշուշտ չեմ բարկանայ: Սրանից յետոյ, ասածիդ

պէս, նամակը ուշ-ուշ կը գրեմ, քեզ չը խանգարելու համար: Բայց, Սուրէն, նախկին տանտիրուհուցս կատարածում եմ, որ իմ վիճակի մանրամասնութիւնները գրէ բարեկամներին: Ինչ յիմարութիւն էր իմ կողմից, նրան յարարելութեան մէջ դնել և ծանօթացնել բարեկամներն հետ: Բայց սատանան նրա հետ, ինչ ուղում է թող անի: Աղջկադ անունը Օլգա եմ գրել: Փոխադրեցի քեզ 25 բուբլի: Բարեկամներս յարգեցին իմ առաջարկութիւնը: Ստացել եմ նամակներ, որոնք լի են քաջալերական խօսքերով: Ցգրութիւն: Համբոյրներով քո Սօնա»:

«Խնդիրը բաւական լուրջ էր և ինձ զբաղեցնող: Սակայն երկար ու բարակ մտածելուց յետոյ, մի կըր գտայ: Այդ ժամանակներն ուսանողների մէջ «խոսվութիւններ» կային, շատերին ձերբակալել էին և շատերին էլ աքսորել:

«Իմ ամենամօտիկ յոյն ընկերներից մէկը՝ Կունդուրիս Սիլուսթրուպիսը, որը նոյնպէս ուսանել էր փիլիսոփայական ճիւղը. նա մի տարի էր աւարտել էր և պատրաստում էր գնալ իւր հայրենիք՝ Աթէնք: Ես նրան գործի մանրամասնութիւնները պատմեցի և խնդրեցի, որ անցագրերս փոխենք: Նա սիրով ընդունեց իմ առաջարկութիւնը: Հետևեալ օրը Սօնայից նամակ ետացայ:

«Իմ թանկագին ամուսին, իմ սիրելի Սուրէն,

Տրամադրութիւնս այնքան խանգարել է, որ չեմ կարող արտայայտել այն բոլորը, ինչ որ զգում եմ: Միայն թէ կուզենայի քեզ տեսնել, և մխիթարել քեզանով: Ի սէր Աստուծոյ, ինձ տար քեզ մօտ, առանց քեզ այլևս չեմ կարող ապրել: Տա՛ր ինձ, տա՛ր, ինչպէս էլ որ ապրենք, ես յօժար եմ: Ես կը լինեմ քո ստրուկը, միայն թէ ինձ ազատիր այս անպատուութիւնից: Բարեկամներս նամակ են գրել և ինձ անարգանքի սխնին են գամում, որպէս անատալի: Բայց զիտե՛ս, Սուրէն, բարեկամներս մի երկար, բայց խիստ նամակով պատասխանեցի և վերջում աւելացրի հետևեալը. «Նա իմ օրինաւոր ամուսինն է և երբէք էլ ինձ չէ լքում, ինչպէս դուք կարծում էր: Այո, ես



իմ կեանքը տւի նրան և այժմ էլ պատրաստ եմ նոյն իսկ լապտարաբունի կամ խոհարարունի դառնալ և օգնել նրան, միայն թէ նա աւարտէ համալսարանը: Այնուհետև մենք երջանիկ ամուսիններ կը լինենք: Նրանց յանդիմանական համակնիքը կարողաւ համարմարդ քարասիրտ պէտք է լինի: Որպէսզի պաղափար կազմես, ներփակեալ ուղարկում եմ քեզ նրանց՝ ինձ գրած իրր Վիսթարական» համակը:

Համրոյրներով քո Սօնա»:

«Առաջին յուսահատական համակն էր, որ նա գրում էր ինձ: Սօնայի բարեկամների գրած համակը հեղեղեալն է:

«Մեր սիրելի Սօնա, դու լաւ գիտես, որ մենք ենք քեզ մեծացրի: Հինգ տարեկան էիր երբ զրկւեցիր ծնողներիցդ, անհոգ, անպաշտպան մի թշուառ որբունի. մեր ծախքով աւարտեցիր գիմնազիօնը, չը խնայեցինք մեր կոպէկները, քեզ ուղարկեցինք Մոսկւա բարձրագոյն կրթութիւն ստանալու: Միտում էինք քեզ ինչպէս միւր հարսդատ զաւակին, սակայն այդ բոլորի փոխարէն մի այնպիսի արատ շարտեցիր մեր ընտանեկան մաքուր անւան վրայ, որ երբէք չի մոռացել: Ծնորակալութիւն քո նախկին տանտիրուհուն, որ մեզ շուտով իմացրեց գործի եղելութիւնը, եթէ ոչ սրիկայ ստուգենտները դեռ շատ ժամանակ մեր փողերը կուտէին և կը ծիծաղէին քո անբախտութեան և մեր յիմարութեան վրայ: Թէ ինչպէտք է անել, մինք ինքներս էլ չը գիտենք: Գրիր մանրամասնութիւններ: Ի՞նչ խորտակեցիր մեր բոլոր ոսկէ յոյսերը: Քեզ սիրող Թառամեաններ»:

«Նամակների բովանդակութիւնը շանթահարեց ինձ: Ես զգում էի, որ իմ ամբողջ ապագան փչանալու է և խորտակելու են իմ երազները: Բացարձակ մերժել նրան և դառնալ նրա դժբախտութեան պատճառը՝ չէի կամենում, իսկ ապրել նրա հետ՝ անտանելի էր ինձ համար: Սակայն այդպէս անորոշ գրութեան մէջ շարունակել համալսարանն անկարելի էր:

«Որպէսզի աղատէի ապագայ չարիքից, հարկաւոր էր կեղծ անցագրով ապրել և շարունակել ուսումը: Ուստի վերցրի մի երկար ու բարակ համակ գրեցի Սօնային: Վերջին համակը լինելով, հրահանգներ և խորհուրդ տւի նրան: Իսկ վերջում աւելացրի.

– Ինչպէս քեզ թերթերից յայտնի է, միւր ուսանողական շարժումները ունեցան աղետալի հետեանք: Ինձ ևս մի քանի ընկերների հետ աքսորում են: Սակայն, Սօնա, չը յուսահատես, չէ որ դու էն վառվռուն, էն սիրուն Սօնան ես: Երեի մի գեղեցիկ օր կրկին կարծանանանք իրարու: Բայց, Սօնա, իմ վերջին խօսքն է՝ նւիրիր քո սէրը մի ուրիշին, սակայն ինձ չը մոռանաս: Իմ կողմից համրուիր Օլգայի կարմիր այտերը: Ընդունիր սիրոյ և անկեղծ համրոյրներս: Էլ չեմ կարող գրել... Մնաս բարեաւ իմ թանկագին Սօնա: Ծիշտ չը գիտեմ, բայց ասում են, որ մեզ կաքորեն Տամբովսկի նահանգը: Եթէ մի դժբախտութիւն չը պատահեց, միշտ կը գրեմ... Սակայն կասկածում եմ... Քեզ ուշ պատասխանելուս պատճառն իմ բանտարկութիւնն էր»:

«Նամակը ուղարկելուց յետոյ, կէսօրին, նրանից էլի մի համակ ստացայ, մի հեռագիր էլ համակում ներփակած:

«Հեռագիրը Սօնայի բարեկամ Թառամեաններից էր և հետեալ բովանդակութիւնն ունէր.

«Սօնա, ստացանք քո ապերախտ զգացումներով ի համակը. շնորհաւորում ենք ձեր քաղաքական ամուսնութիւնը: Որբունուց այդպէս էլ սպասելի էր: Թող այս հեռագիրը միւր բարեկամութեան առաջին և վերջին նշանը լինի»:

«Ինքնագիտակցութիւնը կորցրածի պէս կարգացի և Սօնայի համակը.

«Միրելի Սուրէն»:

Կարծեմ մտած կը լինես իմ գրութեան մէջ: Ամեն բան քեզ յայտնի է, Թառամեաններից ոչ մի սպասելիք չունեմ, յարաբերութիւնս կտրեցի նրանց հետ: Երկար մտածելուց յետոյ, քո տւած խորհուրդի

համաձայն մտայ մի տուն դայիակի սյաշտօնով, երկու չարեաց փոքրագոյնն այդ էր: Այն ընտանիքը, որտեղ ծառայում եմ, բաղկացած է եօթ անդամներից: Երկու փոքրիկ աղջիկ են, երկու ուսանող, մէկ գիմնադիստ և ծնողները: Բաւական հարուստ են, վարում են շատ քաղցր և սիրալիր կեանք: Ելի փոխադրեցի քեզ 15 բուրի: Ինձ շուտ-շուտ նամակներ գրիր: Կովկասի ընկերուհիներիցս շատ նամակներ եմ ստանում, որոնց մասին յետոյ կը գրեմ: Սուրէն, ուսանողական շարժումներից զգոյշ եղիր:

Ընդունիր ջերմ համբոյրներ ինձանից և Օլգայից:
Քո Սօնա:

«Տարիներ անցան: Ես կամաց-կամաց նրան մոռացութեան տւի: Երկու տարուց յետոյ աւարտեցի համալսարանը, վերցրի դիպլոմս և ուղևորեցի Փարիզ: Ինչը տարի ապրելով Ֆրանսիայում տիրապետեցի լեզւին: Ահա լրանում է չորս տարին, որ ես Մոսկուայում եմ:

«Ընդամենը տասներեւոց տարի է անցել այն օրից, երբ բաժանեցի Սօնայից: Այդ ժամանակամիջոցում իմ զգացմունքները բոլորովին փոխւել էին... Նրա բարի և յուսալից աչիւրը, թուխ յօնքերը և անմիտութիւն արտայայտող դէմքը միշտ յիշողութեանս մէջ է: Քանի հոլովւեն տարիներն իրար կտակից, քանի անցնի ժամանակը իւր անդառնալի անիւով, այնքան Սօնան թարմանում է իմ յիշողութեանս մէջ, և նրա ձայնի ամեն մի ելեւջը անուշ ու քաղցր է հնչում ականջիս:

«Սրանից չորս տարի առաջ, երբ իջայ Մոսկուայի կայարանը, իմ առաջին և նւիրական պարտքը համարեցի դնալ հասցէների սեղան, նրա տեղն իմանալու: Սակայն նա չը կար...

«Առտւած նրա հետ, — մտածում էի ես, — գուցէ վերադարձել է Կովկաս:

«Միւս օրն այցելեցի Պուշկինի արձանը, որտեղ առաջին անգամ ծան...

Կունդուրիսը ծանօթ բառը չը կարողացաւ վերջացնել, լսւում էր միայն նրա հեկեկանքը:

Նրա պատմութիւնն այնքան խորն էր ազդել ինձ վրայ, որ կարեկցութեան և ատելութեան զգացմունքները կուռում էին իրար հետ, մի ելք փնտռելու: Մինչդեռ իմ սիրտը եղիւ էր դրական և բացասական զգացմունքների աստղաբեկ, նա դարձեալ շարունակեց.

«Ինչպէս քեզ յայտնի է, ես ապրում եմ ողու թերթերին աշխատակցելով: Ես իմ գրիչը նւիրեցի այն դժբախտ կանանց, որոնք լուկ հացի համար ծախում են իրենց մարմինը, զգացմունքներն ու կեանքը: Եւ որպէս մայրաքաղաքի ճահճոտ կեանքի յաջող պատկերագիր, մտնում եմ ամեն մի մութ անկիւն՝ աւելի մօտիկից ծանօթանալու այդ դժբախտների կեանքին:

«Անցեալ գիշեր ժամը մէկին՝ ծանօթիս մօտից տուն էի վերադառնում, մի խուլ փողոցով: Դժբախտ կանանցից մէկը գալիս էր կտակիցս, բայց ինձնից առաջ չէր անցնում: Ես քայլում էի դանդաղ և միակերպ. երբ նա հասաւ ինձ, ասաց.

— Թոյլ տւէք ծխել, պարոն:

Նրան տւի մի պապիրոս և լուցիլի: Նա սկսեց ծխել և անցնել, նկատելով, որ ես իրեն հետ չեմ խօսում: Նա գնում էր այն կողմը ուր որ ես էի գնում: Ուստի ուղեցի առիթից օգտւել:

— Ինչո՞ւ էք շտապում, օրիորդ, — հարցրի ես:

— Ներեցէք, ես օրիորդ չեմ, — պատասխանեց նա և կանգնեց:

— Ասացէք խնդրեմ, դուք ձեր վիճակից գո՞հ էք:

— Ինչո՞ւ էք հարցնում:

— Հէնց այնպէս, հետաքրքրւում եմ ձեր կեանքով:

— Այո, տղամարդիկ հետաքրքրւում են մեզանով, երբ մենք նրանց հարկաւոր ենք: Բացի գրանից, նրանք երբէք չեն հետաքրքրւում մեզանով... Ասաց ու հեղանական տոնով հարցրեց.

— Դուք նկարի՞չ էք:

— Ո՛չ, նկարիչ չեմ, գրող եմ, — պատասխանեցի մեղմութեամբ:

—Ахъ да! Դրա համար էք հետաքրքրու՞մ մեզա-
նով... Հնա, հնա, հնա—ծիծաղեց նա: Չեղ միայն գրքերը
կարող են հետաքրքրել:

—Այո, ձեր կեանքից գրքեր կարելի է գրել—
վրայ բերի ես:

—Հնա, պարոն,—ասաց նա յանկարծ,—ես ունեմ
գրքերով ու տետրակներով լի մի արկղ, եթէ հետա-
քրքրու՞մ էք մեր կեանքով, գնեցէք, հը՛, միևնոյն է
մենք այս գիշեր գնալու ենք: Ես ոչ կարգալու ժամա-
նակ ունեմ, ոչ էլ տրամադրութիւն,—ասաց նա և աւե-
լացրեց:

—Որքան էլ գնահատէք, համաձայն եմ պարոն:
Ա՛խ, Աստուած իմ, ի՛նչպէս յիշեցի... Արդէն ժամանակն
է,—ասաց նա ու սկսեց արագ-արագ քայլել:

«Ի՞մ հետաքրքրութիւնն աւելի շարժեց, սկսեցի
հետեւել նրան: Ծանապարհին յայտնեցի, որ եթէ ինձ
խաբելու է և տանելու է իրեն մօտ ուրիշ նպատակով,
մերժելու եմ: Աւելացրի և այն, որ եթէ ուղիղ է ա-
սում, ես նրան արժէքից աւելի կը գնահատեմ: Նա
երդեւ, որ չի ստում: Մի քանի բողբոջից յետոյ
դարձաւ ինձ և ասաց:

—Պարոն, մի՞թէ դուք կարծում էք, որ մեր որ-
սերին չենք ճանաչում: Բաւական է մի անգամ նա-
յենք տղամարդկանց երեսներին և մենք կը կարդանք
նրանց աչքերի մէջ՝ թէ նրանք ինչ են կամենում: Չէ
որ մօրս խօսքերը դեռ թարմ հնչում են աւանջիս:
Երբ նա վերջացրել էր թոյնի բաժակը մինչև վերջին
կաթիլը, ինձ պատւիրեց, որ... Օ՛հ, ոչ, չեմ ուզում
խօսել... Չէ որ մայրս պատւիրեց, լուսն և ոչինչ չը
խօսեմ մեր անցեալից,—ասաց նա ինքն իրեն և աւե-
լի արագացրեց քայլերը: Ես լուռ հետևում էի նրան
և մտածում...

Նա մօտ 16 տարեկան էր, դէմքն շղարած էր,
սև, խոշոր աչքեր ունէր, թուխ յօնքեր և երկարաքիթ:
Գլուխը շաղկապած էր, այնպէս որ նրա մազե-

րը չէին երևում: Անգիտակցաբար գնում էի նրա ետե-
ւից և մի ինչ որ նախազգացում ճնշում էր ինձ:

«Ես դուռն անցել էի, երբ նրա ձայնն ինձ սթա-
փեցրեց:

—Այստեղ է, պարոն,—ասաց ու աստիճաններից
վեր բարձրացաւ: Նա արկղը բաց արեց, ցոյց տւեց
գրքերն ու տետրակները:

—Իսկ այս կապոցը,—ասաց նա վեր բարձրա-
ցնելով,—նոյնպէս տետրակներ են ու մի քանի նամակ-
ներ: Ահա մօրս ինձ թողած ամբողջ ժառանգութիւնը:

Նա մոայլեց ու ժպտաց:

«Տրամադրութիւնս խանգարւած էր: Ինձ համար
անտանելի էր և այն հանգամանքը, որ այդտեղ դժ-
բախտներն էին միայն վիտում. նրանց հոգեոցն ու
գիւլային քրքիջները չը լսելու համար, հանեցի գըր-
պանիցս տասը բուրլիանոցն ու տւի նրան: Վերցնելով
արկղը կառքով վերադարձայ սննեակո: Չափազանց
յոգնած լինելով մտայ անկողին և անմիջապէս քնեցի:

«Առաւօտեան ուշ զարթնեցի: Տրամադրութիւնս
տեղն էր: Նախաճաշելուց յետոյ, սկսեցի արկղիկը հա-
ւասով քրքրել... Եւ ահա թէ ինչ գտայ այնտեղ,—
ասաց Կունդուրիսն ու բարձի տակից հանելով մի
հաստ տետրակ մեկնեց ինձ: Իսկ ինքը գլուխը ծածկե-
լով բարձի մէջ, սկսեց հեկեկալ: Դա Սօնայի և Սու-
րէնի «Մեր կեանք» յիշատակարանն էր: Մեծ մասը
գրւած էր մատիտով և հազիւ հազ էր կարդացւում:
Նրա թերթիկներից շատերը մաշւել էին և անյայտա-
ցել: Յիշատակարանը վերջանում էր հետեւալ խօսքե-
րով. «Այո, սիրելի Սուրէն, սէրը կարճատև խելագա-
րութիւն է»:

Ես յիշատակարանը ետ տւի Կունդուրիսին և մի
քանի մխիթարական խօսքեր ասելով, հեռացայ տխուր
տպաւորութեան տակ: Նայեցի ժամացոյցին, հինգին
մօտ էր: Թէ ի՛նչպէս քնեցի, լաւ չեմ յիշում: Առա-
ւօտեան խոր քնի մէջ էի, երբ ատորճանակի պայթիւնը

զարթեցրեց ինձ: Մի ակնթարթում վազեցի հարևանիս
սենեակը: Կունդուրիսը (Սուրենը) արինշաղաղ ընկել
էր յատակի վրայ. քիչ հեռու «Մեր կեանք» յիշատա-
կարանի մոխրակոյտն էր միայն երևում... Երկու տոմ-
սակ էր թողել. մէկն ուղղւած էր ոստիկանութեանը,
որով խնդրում էր ոչ ոքի չը մեղադրել, իսկ միւսն՝ ինձ,
հետեւալ ըսովանդակութեամբ.

«Սիրելի բարեկամ.

Լինում են պարագաներ, երբ յուզւած զգացմունք-
ները յաղթում են ուժեղ կամքին: Սյգալիսի գրութեան
էի հասել և ես: Թող իմ գարշելի գոյութիւնը սրանով
կատարեալ լինի»:



1143-2009

ԳԻՆՆ Է-5 409.

200

ՀՀ Ազգային գրադարան



NL0124030

52067